



Նախագահի գրասենյակ  
ՀՈՒՇԱԳԻՐ

2020 թվականի ապրիլի 1

Բարի երեկո LACC ընտանիք,

Երեկվա մեր Սեզար Չավես տոնից հետո մենք վերադարձանք դասերի: Մենք շարունակում ենք աշխատել «Մնա տանը» կարգադրությամբ: Դա աշխատանքի և դպրոց գնալու նոր ձև է: Հուսով ենք, որ դուք գտել եք նոր տեխնոլոգիաներին հարմարվելու ձեր միջոցը: Վստահաբար մեզ տեղեկացրեք, թե ինչի կարիք ունեք՝ [hotline-students@lacitycollege.edu](mailto:hotline-students@lacitycollege.edu) էլեկտրոնային հասցեով:

Այսօր նահանգապետ Նյուգոմը հայտարարել է, որ Կալիֆոռնիայում դպրոցները փակ կմնան ողջ ուսումնական տարվա ընթացքում: Մենք կսպասենք հատուկ հրահանգի մեր պետության և LACCD-ի կանցլերների կողմից, թե ինչպես առաջ շարժվել: Խնդրում ենք իմանալ՝ հենց որ մենք կարողանանք վերադառնալ քոլեջ, ապա այդպես էլ կանենք: Մենք վերադառնալու պատրաստման գործընթացի մեջ ենք, որպեսզի պատրաստ լինենք, երբ ժամանակը գա:

Մենք շարունակում ենք հետևել մեր թեժ գծերին:

[Hotline-students@lacitycollege.edu](mailto:Hotline-students@lacitycollege.edu)

1 (888) 930 - LACC

[lacc-techsupport@laccd.edu](mailto:lacc-techsupport@laccd.edu)

Ակադեմիական գործերի բաժնի կողմից

Մենք մեր դասախոսներին խնդրել ենք, որպեսզի ուսանողներից չպահանջեն գնել լրացուցիչ դասագիրք կամ պարագաներ, որոնք նշված չեն եղել նախնական ծրագրում: Մենք հասկանում ենք, որ դեմ առ դեմ դասերից առցանց միջավայր տեղափոխելը հեշտ գործ չէ, և հնարավոր է, որ անհրաժեշտություն լինի հարմարվել դասավանդման պարագաների հետ: Մենք դասախոսական անձնակազմի հետ կիսվել ենք բաց աղբյուրի ակադեմիական ռեսուրսներով, որպեսզի ուսանողները ստիպված չլինեն որոնելու նոր դասագրքեր և նյութեր:

Խնդրում ենք համոզվել, որ եթե ստուգում եք ձեր Canvas հաշիվը, մտնում եք այնտեղ ձեր դասընթացի նյութերին ծանոթանալու համար և եթե օգնություն կարիք ունեք Canvas-ով շրջելու համար, խնդրում ենք զանգահարել Welcome Center 1 (888) 930 - LACC համարով, կամ դիմել նրանց [www.lacitycollege.edu](http://www.lacitycollege.edu) կայքում սեղմելով blue chat կոճակը, և մեր Welcome Center-ի աշխատակիցները ուրախ կլինեն ձեզ օգնելու:

## Ուսանողական ծառայությունների բաժնի կողմից

Մենք սթափ ենք և ուսանողական վիրտուալ ծառայությունները վերահսկում ենք Cranium Café-ի միջոցով: Ուսանողները կարող են ժամադրություն վերցնել իրենց խորհրդատուների հետ, որպեսզի նրանց հետ վիրտուալ հանդիպեն LACC կայքում տեղադրված Cranium Café-ի միջոցով: Մենք նաև ծառայություններ ենք մատուցում Հատուկ ծառայությունների բաժնի աշխատակազմի միջոցով: Մենք մեր OSS-ի ուսանողներին տրամադրել ենք իրենց անհրաժեշտ սարքավորումների մեծ մասը, որպեսզի նրանք կարողանան իրենց դասերը հաջողությամբ ավարտին հասցնել այս կիսամյակում: Մենք ակնկալում ենք, որ անհրաժեշտ սարքավորումներից վերջինը ամբողջությամբ ուսանողներին բաշխելը ավարտին հասցնենք հաջորդ շաբաթ:

Associated Student Government-ը 20,000 դոլար է նվիրաբերել՝ կարիք ունեցող ուսանողներին սարքավորումներ գնելու համար: Հուսով ենք, որ շուտով դրանք հասանելի կլինեն: Մենք շարունակում ենք աշխատել ամեն օր ուսանողների համար ավելի շատ սարքեր հասանելի դարձնելու ուղղությամբ: Նախատեսված է, որ ուսանողներն իրենց ֆինանսական օգնությանը ստանան 2020 թվականի ապրիլի 22-ին: Ուսանողները կկարողանան իրենց դասերը դադարեցնել՝ ստանալով Emergency Withdrawal (EW), եթե դա արվի ապրիլի 22-ին կամ մինչ այդ: Դժբախտաբար, մենք հնարավորություն չունենք շարունակելու մեր Pop-up Food Pantry-ին, քանի որ մեր սննդամթերքի մատակարարն այժմ սնունդ է բաժանում մեր համայնքում, և նրանք այժմ սնունդ չունեն:

Ուսանողների համար սննդի բաշխման վայրերը գտնվում են [lacitycollege.edu](http://lacitycollege.edu) կայքում՝ գլխավոր էջի վերևում գտնվող Student Assistance and Resources կոճակի ներքո: Եթե ուսանողներին անհրաժեշտ է որևէ բժշկական կամ հոգեբանական օգնություն, խնդրում ենք ուսանողներին ուղարկել Ուեալի կլինիկա, որը գտնվում է Վերմոնտ պողոտայի՝ LACC-ի դիմացի փողոցի վրա:

## Աղմինիստրտիվ ծառայությունների բաժնի կողմից

Ներկայումս ուսանողական նոութբուքերի բաշխումը ավարտվել է քոլեջում (մենք սպասում ենք լրացուցիչ նոութբուքերի և ուսանողներին տեղյակ կպահենք հենց որ ստանանք):

Ուսանողները, ովքեր դեռ գրքերի կարիք ունեն, կարող են պատվիրել առցանց: Գրախանութը առաքում է վեբ պատվերները գարնան և ուշ գարնանը սկսվող դասերի համար [www.laccbookstore.com](http://www.laccbookstore.com) կայքի միջոցով: Մենք հանում ենք առաքման համար գանձվող վճարները և ժամադրություններ ենք նշանակում վերցնելու համար (մենք փորձում ենք դա անել առավոտյան 9:00-ից 15:00-ը): «Գնումներ» կատարելու ժամերը նույնն են (առավոտյան 9:00-ից 15:00-ը) [bookstore@lacitycollege.edu](mailto:bookstore@lacitycollege.edu) էլեկտրոնային հասցեով կամ 323-953-4000 x2142 հեռախոսահամարով:

Մենք քոլեջում չենք և ուսուցումն անց է կացվում առցանց : Այն, ինչը չորս շաբաթ առաջ անհնար էր թվում, այժմ տեղի է ունենում զանգվածային մաշտաբով: Դուք բոլորդ զարմանալի

աշխատանք եք կատարել: Մենք պատրաստ ենք շարունակելու աջակցել այս կիսամյակը  
լավագույնը դարձնելու համար:

Ստորև բերված հոդվածը պետք է ձեզ ժպիտ պարզևի և ջերմացնի ձեր սիրտը: Հիշեք, որ մեզ  
մոտ ամեն ինչ լավ է լինելու:

<https://jimbotimes.com/2020/04/01/jimbo-times-salutes-laccd-students-oming-back-to-school-this-week/>

Հուսով եմ, որ կտեսնեմ ձեզ վաղը իմ Town Hall-ում, 13:30-ին:

ՀԱՎԱՏԱՆՎԱՃԻՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԻՐ      Դա անելու այլ տարբերակ չկա:

Մագթում եմ ձեզ, որ հիանալի շաբաթ ունենաք,

Մերի

Այցելեք LACC կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն  
կարդալու համար: